

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլի է տարվանը 6 ռուբլի:
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանից խմբագրատան մէջ:

() տարագրագրացիք գրվում են ուղղակի
Тифлис. Редакция „Мелк“

Խմբագրատանը բաց է առաւտան 10—2 ժամ
(Կայի կիրակի և ամեն օրերից)

Հայտարարութիւնը ընդունվում է ամեն լի գումով:

Հայտարարութիւնների համար վճարում են
խաբանչիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԴԱՎՈՒԹԻՒՆ

Առաջին գաւառական լրագիրը.— Ներքին տեսչութիւնը Մի նկատողութիւնը համակ հուշացի Ներքին լրագրի.— Սառն լուրերը.— Յայտարարութիւնները.— Բանասիրական խնդիր:

ԱՌԱՋԻՆ ԳԱՆՈՒԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Ինչքան տարի շարունակ մենք յորդորում էինք մեր գաւառացի խնտիւղէնցիային հիմնել մեր Լնդրկովկասի գլխաւոր հայաբնակ քաղաքներում գաւառական թերթեր հայերէն լեզուով: Մենք յայտնում էինք մեր միտքը թէ ինչ պրոգրամայով պէտք է հրատարակվեն այդ տեսակ գաւառական լրագիրները: Ուրիշ կողմից մենք մի գործնական դժուարութիւն էինք գտնում միայն, այն է որ գաւառական քաղաքներում ցենզորներ չը լինելու պատճառով, լրագրի նիւթերը պէտք է ուղարկվեն Թիֆլիս և այդ պատճառով լրագիրը միշտ կուշանայ, կամ անկարող կը լինի հրատարակվել: Եւ յիշում ուրախ ենք որ վերջապէս իրադրութեցաւ առաջին գաւառական հայոց թերթը Լնդրկովկասում: Դա պ. Վասակ Պա-

պաջանեանի խմբագրութեամբ Լնդրկան քաղաքում հրատարակվող «Պասակ» շաբաթաթերթն է: Ուրախ ենք, նոյնպէս, որ կառավարութիւնը նշանակել է Լնդրկանում մի առանձին աստիճանաւոր լրագիրը քննելու համար. այսպիսով կը հեշտանայ լրագրի հրատարակութեան գործը և «Պասակ» խմբագրութիւնը հարկաւորութիւն չի ունենայ ուղարկել իր նիւթերը Թիֆլիսի ցենզորական մասնագիտովի ըննութեանը, որ ոչ թէ միայն շատ կը դժուարացնէր, բայց և անհնարին կանէր լրագրի հրատարակութիւնը:

Բայց ի՞նչ կը լինի ինքն «Պասակ» լրագիրը.— դեռ որոշ կերպով ոչինչ չենք կարող ասել: Եւ դե՞օք իր ուղղութեամբ կը համապատասխանի նա գաւառական թերթի պահանջին...

Գաւառական թերթի գլխաւոր նպատակը պէտք է լինի բղբաղել նոյն իսկ այն գաւառի ներքին, տնտեսական, հասարակական, մտաւոր, օրական հարցերով, որտեղ նա հրատարակվում է:

Եւ դէ երկու խոսքով, գաւառական թերթի բուն նպատակը, դորա մէջն է և պէտք է լինի

գաւառական թերթի ամբողջ պրոգրամը: Գաւառական թերթերը պէտք է լինեն այն փոքրիկ գետակները, որոնք ընկնելով մեծ գետի մէջ, մտնող են տալիս այդ վերջինին, աւելացնում են նրա նիւթը...

Ինչքան գիտնական, խելոք, ուսումնական, հանճարեղ իրան համարէր գաւառական թերթի խմբագիրը, քանի որ նա յանձն է առել գաւառական թերթի խմբագրի համեստ պաշտօնը, նա պէտք է իր պաշտօնը ճշգրտութեամբ կատարի, չը դուրս գայ իր յանձն առած դերից և չերեւակայի իրան, որ ինքն է մեծ գետը, որի մէջ ընկնելու են միւս փոքրիկ գետակներն ու աղբիւրները:

Ի՞նչ կասէիք դուք այն մարդու մասին, որ յանձն առնելով, թէ և շատ յարգելի, բայց այնու ամենայնիւ համեստ գործ մի գիւղում տարրական ուսումնական հիմնելու և կառավարելու, յայտնէր, որ այդ իր նոր հիմնած դպրոցը պէտք է դառնայ բարձրագոյն մի դպրոց, պէտք է դառնայ համալսարան... Եւ շուտ դուք կը ծիծաղէիք այդ տեսակ մարդու մասին...

Ուրիշ բան է որ ինքն խմբագիրը կարծում է իրան շատ գիտնական, շատ հանճարեղ և բոլոր միւս խմբագիրներից բարձր.— բայց այնու ամենայնիւ իր յանձն առած դերը նրան ստիպում է համեստութեամբ գործը առաջ տանել: Գաւառական թերթը չէ կարող յանդգնել վճռել ընդհանուր հարցեր. այդ տեսակ գործ պէտք է իր անմիջական նպատակներից դուրս լինի: Գաւառական, գիւղական դպրոցը երբէք չէ կարող համալսարանի, կամ մինչև անգամ միջնակարգ դպրոցի դերը խաղալ, թէ և այդ տեսակ դպրոցի տեսուչը գուցէ և հաւատացած է որ մի չար բաղդ նրան ստիպում է ապրել գիւղում և կառավարել մի գիւղական դպրոց, եթէ ոչ նա կարող էր լինել Բերլինի համալսարանի պրոֆէսոր...

Ինչ կը նշանակի հրատարակել մի գաւառական թերթ «Պասակ» վերնագրով և իր առաջին համարի մէջ յայտնել մի այդ տեսակ ինքնահաւան միտք: «Մեր լրագիրը կը լինի ժամանակի օրագրութիւն. նա կընդունի իր մէջ ինչ որ ժամանակի ակնբները կը բերեն, կը հասցնեն նրան: Եւ

Ի Ե Ն Թ Ը

ԱՐԿԱՆՆԵՐ ՎԵՐՋԻՆ ՌՈՒՄԻՌՈՒԹԱԿԱՆ ՊԱՍԵՐԱԶՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ի.

Վարդանը ամբողջ օրը ձիով ման եկաւ, անցաւ մի քանի գիւղեր, ամեն տեղ որոնելով պ. Գուգուկեանին: Նրա հարցով փորձին պատասխանում էին, թէ, այո՛, տեսել են մի երիտասարդ երկայն կոշիկներով, եւրօպական հագուստով, լայն զերայ սև գլխարկով, ահագին գաւառանը ձեռքին և տետրակներով ի պայուսակը կշտից քարշ գցած: Եւ ամեն բերնից լսվում էր մի և նոյն կարծիքը, թէ նա խնձի էր:

Երեկոյան վարդանը վերադարձաւ ծերունի խաչօր տունը առանց գտնելու թափառալիկ երիտասարդին:

Երեւոյն խաչօր հովիւներից մէկը պատմեց Վարդանին, թէ նա տեսաւ երիտասարդին հարեւան գիւղում, և թուրք գլխագլքը հաւարված, նրան ծնծում էին. ինքը ճանաչեց, որ ծնծվողը իր աղայի հիւրն էր և աղատեց կատաղած գիւղացիների ձեռքից:

«Եւս մի այսպիսի բան սպասում էի... ասաց

Վարդանը ինքն իրան, և դառնալով դէպի հովիւր, հարցրեց.

— Ի՞նչու համար էին ծնծում:
— Եւ չը հասկացայ, պատասխանեց հովիւր.— ուղում էի նրան աւանակի վրա դնել, և տուն բերել, բայց չընդունեց, ասաց, եւ իմ ոտով կարող եմ գալ: Ի՞նչ կը գայ, ոսկորների մէջ մի հատ էլ ողջ չի մնացել:

Այդ լուրը շատ տխրեցրեց Վարդանին. նա գիտէր, թէ ինչ բան է թուրք գիւղացու մուշտին, մանաւանդ երբ գործ է դրվում խեղճ հայի մարմնի վրա:

— Ո՛րտեղ թողեցիր նրան, հարցրեց հովիւրը:
— Վէս ճանապարհի վրա: Սրբովելով գալիս էր, Գեա օղայի մէջ ճրագը նոր էին վառել, երբ յայտնեցաւ պ. Գուգուկեանը, յոգնած, և ոտքից ցլուխ ցնխոտված: Վարդանը սպասում էր, որ նա իսկոյն կը սկսէ պատմել գիւղացիների կատար վարմունքը իր հետ, բայց այդ մասին նա ոչինչ չը խոսեց, միայն նրա գէմբի վրա նկատված էր սաստիկ յուսահատութիւն դառն ատելութեան հետ:

Նա անցաւ, և թէք ընկնելով, պառկեց օղայի մի կողմում, թեքը դնելով բարձի վրա:

— Դուք կարող էք տալ ինձ մի փոքր ծխախոտ խնդրեց նա Վարդանից:— Խմը սպասվի է:

— Խալոյն, պատասխանեց Վարդանը և ծխախոտի տուփը տուեց նրան:

Նա զոգողջուն ձեռքով շինեց մի պապիրոս և սկսեց ծխել:

— Կատարեալ փիկրն է, կատարեալ հանելուկ է, այդ ժողովուրդը, խոսեց նա ինքն իրան.— հա մը-տաճիր, հա քննիր, դարձեալ չես կարող ճանաչել,

Նա կամ պատմութիւն չունի, կամ պատմութեան մի տեղը, մի այլանշան արտագրութիւնն է...

Նա լռեց, անդադար թողնելով իր բերնից պապիրոսի թանձր ծուխը: Կարծես, նրա հետ աշխատում էր ցրվել սրտի վրա ծանրացած թախծութիւնը:

Վարդանը նոյնպէս լուռ էր: Եւ խորին կարեկցութեամբ նայում էր այդ եւտանդով լի երկտասարդի վրա, որ երևում էր նրան, որպէս մի անփորձ թիֆլիսեցի, որ խաղում է ճրագի հետ և իր անգոր թիֆլիսեցի շարժումով աշխատում է հանգցնել նրա բոցերը...

Նոյն միջոցին ներս մտաւ ծերունի խաչօր և քանի րոպէից յետոյ, ամեն զիջելու սովորութեան համեմատ, հաւաքեցան նրա որդիները, թէ և արեւ մտնելուց դեռ մի ժամ էր անցել, բայց ընթերցել չուտ տուեցին, որովհետեւ, իբրեւ մշակ մարդիկ, նրանք պէտք է չուտ ուտէին, չուտ քը-նէին և առաւտեան վաղ վեր կենային:

Բնթերթի ժամանակ պ. Գուգուկեանը բաւական խմել և նրա սրտի տխուր արամագրութիւնը փոքր ինչ ուրախ կերպարանք ստացաւ: Նա մինչև անգամ երգեց «Տէր կեցցի դու՛ գեպտ թաղիա-գետանի» նշանաւոր երգը: Եւր սեղանը հաւաքեցին, նա դարձաւ ծերունի խաչօրն, ասելով.

— Զրամայեցէք օղայի դուները փակեն և մեզ չը խանգարեն, եւս մի առանձին խոսելիք ունենա:

Երեւոյն զարմացաւ, թէ ինչ առանձին խոսելիք պիտի ունենայ, և ասաց որդիներից մէկին, որ դուները փակեն: Բոլորը լռութեամբ սպասում էին նրա խոսքին:

— Եւտով կը հրատարակվի պատերազմ ուս-

նորի և թուրքերի մէջ.— Գիտէ՞ք այդ բանը, հարցրեց նա:

— Մենք ոչինչ չենք լսել այդ մասին, պատասխանեցին նրան ծերունին և իր որդիները:

— Եւ գիտեմ, ասաց Վարդանը.— մեր կողմնորում ուսները սաստիկ պատրաստութիւններ են տեսնում:

Այդ լուրը կայծակի նման հարուածեց խեղճ ծերունուն: Նա իր կեանքում մի քանի անգամ տեսել էր ուսների և թուրքերի մէջ եղած պատերազմները և դեռ չէր մոտացել նրանց սարսափելի հետեւանքները հայերի վերաբերութեամբ: Իսկ Հայրապետը այժմ հասկացաւ քուրդ տիկնոջ մի քանի օր առաջ Սառային հաղորդած խօսքերի զայտելը, թէ ինչ նպատակի համար էր պատրաստում Ֆաթմա-հէկը իր հեծելազորը:

— Այո՛, պատերազմ կը լինի, խոսեց Վարդանը մի առանձին հեղուկութեամբ.— Եւս և ջորին պիտի կռուեն, իսկ մէջեղում էլ կը ստակիր...

— Այդպէս է, ասաց ծերունու մեծ որդին.— Հայրապետը.— մեր կողմին հայերը կը արորմեն, կը ոչնչանան պատերազմի փոթորիկի մէջ:

— Այդ եւս չի գիտեմ... պատասխանեց ծերունին և նրա ձայնը խեղճիցաւ սրտի կակիծից:

— Եւտե՞ք, ասաց պ. Գուգուկեանը.— Նա աշխատում էր այս գիւղի իր խօսքերը աւելի աւանդել և նրանց աւելի հասկանալի ձև տալ:— Այս պատերազմը մինչև այսօր թուրքերի և ուսների մէջ եղած միւս պատերազմների նման չէ, դա բոլորովին ուրիշ միտք և ուրիշ նպատակ ունի: Գուգ. լրագրից չէք կարողում, ի հարկէ, չէք կարող գիտնալ, թէ այժմ ինչ է գործվում աշխարհի մի ուրիշ մասում, որին կոչում են Բալ-

կը լինի մի ընդհանուր ընդունարան, և այլն:»

Արեմն պ. Պապադանեան դիտաւորութիւն չունի հրատարակել մի գաւառական թերթ, այլ Արեանից, որտեղ ոչինչ մտաւոր կեանք չը կայ, դիտաւորութիւն ունի հրատարակել մի ընդհանուր հայոց թերթ....

Ինչքան պ. Պապադանեան իրան հանձարեղ մարդ կարծէր, նրան անհնարին կը լինի Արեանից որ և է ընդհանուր հարցեր վճռել: Տեղափոխեցէք մի ամենազիւնական պրոֆէսորին, մի ամենաընդունակ պոլիտիկոսին մի մեծ քաղաքից մի գաւառական քաղաք, — նրան անհնարին կը լինի նոյն նշանակութիւն ունենայ, ինչ որ նա ունէր մայրաքաղաքում:

Թող Լաիւզը-ժիրարդէն փորձի Մարսէյի կամ Մոնպելիէի մէջ հիմնել մի մեծ թերթ, որ նոյն կշիռ ունենար ինչպէս Փարիզում հրատարակված նրա «Liberté» կամ «France» լրագիրներն ունէին, — և նա կը տեսնի որ այդ նրան անհնարին կը լինի:

Գուցէ Գերմանիան այդ կողմից բացառութիւն է կազմում ամբողջ աշխարհից. այդ երկրում Կեօնի կամ Լուքսեմբուրգի պէս համեմատաբար աննշան քաղաքներում հրատարակվում են այնպիսի լրագիրներ, որոնք նոյնքան և գուցէ աւելի մեծ ազդեցութիւն ունեն երկրի հասարակական կարծիքի վրա, քան թէ մայրաքաղաքում, Բերլինում հրատարակվող

լրագիրները: Գերմանիայում, ուր կամ տառ հազար բնակիչ ունեցող քաղաքում համարաբար շատ անգամ աւելի հոգակիւմ է քան թէ նոյն երկրի մայրաքաղաքի համարաբար: Այդ այն պատճառով է, որ Գերմանիայի իւրաքանչիւր իշխանութիւն, իւրաքանչիւր նահանգ, գաւառ կամ քաղաք դարերով ապրել են իրանց ինքնուրոյն, անհատական կեանքով:

Մեզանում և ոչ մի երկրում այդպէս չէ: Յանկալի է որ «Արասկը» և նրա օրինակին հետեւողները, հասկանային իրանց համեստ կոչումը:

Այստեղ չէր լինի աւելի համեստ կերպով սկսել գործը. գաւառական թերթը պէտք է միմիայն գաւառական շահերը պաշտպանի, գաւառական գործերով և հարցերով զբաղվի:

Ինչ են նշանակում «Պասկի» առաջին համարի առաջնորդող յօդուածի մեծ մեծ ֆորագուն եր... Ինչ կը նշանակի հրատարակել մի գաւառական լրագիր «Պասկ» վերնագրով: Մի՞թէ կարելի է այդքան քիչ համեստութիւն ունենալ կարծելու համար որ իր լրագիրը բոլոր հայ լրագիրների պատկեր կը լինի: Ինչ կը նշանակի գաւառական թերթին այդտեսակ պրոգրամ տալ՝ մանկավարժական և պատմական: Եթէ գաւառական լրագիր էք հրատարակում, պէտք է գաւառական լրագրի պրոգրամ տաք նրան, և նպատակ չը դնէք ձեզ

ընդհանուր հարցեր վճռելու: Աւելի լաւ կը լինէր, եթէ պ. Պապադանեան այդտեսակ վերնագիր տար իր լրագրին. «Արեանի թերթ», լրագիր գաւառական: Այդ վերնագրին համեմատ իր լրագրի պրոգրամն էլ որոշէր ու գծադրէր:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆ

Վերջին ժամանակներս Թիֆլիսում հրդեհները այնքան յաճախակի են պատահում, որ ամենախաղաղ անձանց անգործութիւնն անգամ զրգովում և նեղարկում են նրանց կասկածանքի, թէ և նրանք ամենափոքր արտադրանքով ազատ լինելու: Մասնաւոր որ դարմանայի է, տեղական ուսուսումնական հաստատութիւնները աւելի են հակամարտ դէպք այս դիրքահանութիւնը: Նրանք առանց հասու լինելու խօսութեանը, առանց հետազոտելու տեղի ունեցած պատահարի բոլոր կողմերը, մանաւոր միւր միւսից առնելով և առաջինի վրա մի բան ևս աւելացնելով, մի կողմակի դործին անկառն մարդու խաղաղ մեղադրում, երբեմն բանտարկում ևս են, և եթէ այս աւարկայ կողմ անհատութիւնը իրան պաշտպանելու վտանգութիւն չունենայ, կամ իսկապէս ասած փոքր ինչ անտարբեր մնայ, չուտով և կախաղանի կարժանցիկն նրան:

Խօսքիս սպասոյց կարող է լինել ամայն Զին պատահած հրդեհը Միքայէլեան կամուրջի վրա: Կրակը յայտնվելով կը բարդ ևս բովանակների մաղաղիւմով, այրեց ամբողջ խանութը իր երկու նկուղներով, այրեց նաւանակ և նրան կից միջավանդի խանութը: Տեղական հրատարակութիւնները փոխանակ իսկական փառաւորով հետաքրքրվում, որին մենք հետամուտ լինելու ոչ կամք ունենք և ոչ կարողութիւն, մեղադրեցին մեզ, որ իրր թէ մենք ենք յանցաւորը, չը բաւականացած դրամով ի վերջոյ և բանտարկած հրատարակեցին մեզ:

կանեան թերակղզի: Այնտեղ նոյնպէս կան քրիստոնեայ ազգեր, որոնք այստեղի հայերի նման թուրքաց հպատակներ են, և որոնք այստեղի հայերի նման դարերով տանջվում էին թուրքերի բարբարոսութիւնից: Բայց նրանք հայերի նման համբերել չը կարողացան, պատամբելցան, և անա մի տարուց աւելի է, որ կռվում են թուրքերի հետ նրանց լծից ազատվելու համար: Յաղթեցին, յաղթվեցան, սարափելի զոհարերութիւններ արեցին, վերջը ռուսները մէջ մտան, և քրիստոնէից ազատութեան անունով, նրանց պաշտպան հանձնեցան: Կ. Պետրով և Երզնկայի պետութիւնները ի ներկայացուցիչները ժողով կազմեցին, որ այդ ճնշված քրիստոնեայ ազգերին մի քանի արտօնութիւններ, մի քանի իրաւունքներ տային, բայց համաձայնութիւն չը կայացաւ և խորհուրդ մնաց առանց հետևանքի: Այժմ ռուսները կամենում են սրի ուժով ընդունել տալ թուրքերին այն, ինչ որ նրանք չը համաձայնեցան ընդունել իրանց հպատակ քրիստոնեաների ազատութեան մասին:

Այդ անցքերի պատմութիւնը, թէ և այն ժամանակ աշխարհի ամենախուռ անկիւններում անգամ տարածվել էր, բայց հայ գիւղացիների համար բոլորովին նորութիւն էր. նրանք ոչինչ չէին լսել, և այդ պատճառով զարմացած լսում էին պ. Գուգուկեանի խօսքերը: Հայ գիւղացին իր հօրիւնից զուր, իր գաւառի միւս կողմում չը գիտէ, թէ ինչ է կատարվում, նրանք այդանը միայն լսել էին, թէ թուրքերը ինչ-որ պատերազմ ունեն, բայց թէ ո՞ւր է և ինչ բանի համար է պատերազմը, — այդ մասին տեղեկութիւն չունէին: Եւ թուրքերի պատերազմ ունենալը յայտնի էր նրանց

այն առիթով միայն, որ հարկերը խտտութեամբ պահանջում էին և աւելի շատ էին առնում քան թէ առաջ, անդադար կրկնելով, թէ հիմա տիրութիւնը պատերազմ ունի, պէտք է օգնէք:

— Թուրքերի այժմեան պատերազմը Թիֆլիսի հպատակ քրիստոնեաների ազատութեան համար է, չարունակեց պ. Գուգուկեանը: — Բայց պէտք է զիտենք, որ Թիֆլիսի աւելի տանջված, աւելի հարստահարված քրիստոնեայ հպատակը հայն է: Այդ դուք ինքներդ լաւ էք իմանում, որովհետեւ ձեր անձի վրա փորձել էք թուրքի ամեն աւսակ բարբարոսութիւնները: Արեմն ժամանակ է, որ հայերն էլ մտածեն իրանց հանգստութեան համար:

— Մենք ինչ պիտի մտածենք, պատասխանեց ծերունի խաչոն, — դուք ինքներդ ասում էք, թէ ռուսները պատերազմելու են քրիստոնեաների ազատութեան համար, Աստուած յաղորդութիւն տայ, նրանք կը գան և մեզ էլ կազաւեն:

— Այդ իրաւ է, միայն մի բան կայ, մէջ մտաւ վարդապետ, — ասում են, ամենի աղան լաց չը լինի, մայրն էլ ծիծ չի տայ: Հայերը իրանց լուսթիւնով իրանց համբերութիւնով և իրանց մեծայայտ սպանով ոչինչ չեն ստանայ: Հայերը պէտք է բողոքեն:

— Այո, պէտք է բողոքեն, կրկնեց պ. Գուգուկեանը, — և այդ բողոքը պէտք է յայտնվի նոյն ձևով, որպէս յայտնեցին միւս քրիստոնեայ ազգերը:

— Ազգում էք ասել, թէ հայերն էլ պէտք է կուռեն... նրա խօսքը կարեց ծերունին:

— Այո, այդ եմ ուզում ասել: Հիմա աշխարհի կարգն այդպէս է, և միշտ այդպէս է եղել, ու որ զէնք գործածել չը գիտէ, ու որ արին թափելու

Այդ անտոյգ տեղեկութեան արմատական խորը Վոլկաուր հանդիսացաւ, որը ոստիկանութեան իրեն հաղորդած տեղեկութիւնը նաղդի ընդունելով, առանց խօսութիւնը ըստուգելու, հրատարակեց, ոչ իբրեւ ենթադրութիւն, այլ որպէս հաստատ իրողութիւն, բայց սա պատիւ չէ բերում աղին: Հրատարակութեանը:

Եթէ մի պոլիցիական պրիստաւ ենթադրում է որ կրակը պատճառված լինի մեր ֆոտոգրաֆիական գործարանից, դա հաստատութիւն չէ, ինչպէս և այն ևս հաստատութիւն չէ, եթէ ևս (անգամ) ասեմ, որ պրիստաւն ևս այդպէս հաւատացնելով իր ուրոշ նպատակն է ունեցել: ամեն մի գործ կամ խնդիր իր հաստատուն փաստերը պէտք է ունենայ և իւրաքանչիւր մի այդպիսի ծանրակշիւ հարց պարզելու համար կան օրէնքներ, քննիչներ և դատարաններ, որոնց միջոցով պէտք է գանգաւնել և երեւան հանել ստոյգը անտոյգից, ինչպէս և անպարտը պարտաւորից: Բայց քանի որ ոչոքի յայտնի չէ, ինչպէս և մեզ, թէ որ քննիչը, երբ և որ դատարանի միջոցաւ է մեզ յանցաւոր ճանաչած, իսկ մի խմբագիր հրատարակում է մեզ յանցաւոր, դա դէպի չարն է գործ դնում իր սուրբ պարտականութիւնը: Սա պատու է կեանքի խնդիր է: Հանաք չէ....

Մեր գործարանում կրակի հետք անգամ չէ երեւցած, բայց այդ այրվող խանութները բաժանվում են մեզանից մի բաւականապէս լայն կորիւնքով: Իսկ եթէ յիշեալ գործարանը ենթարկեց փտանգի կորստեան կամ կողպտման մասնովելով, այդ էլ նոյն պոլիցիականին յատուկ թուութեան շնորհիւ, ինչպէս և ինքն խոստովանեց ասպաճովացող ընկերութեանց գործակատարների առաջ, սակայն և որի ենթագրութիւնը, որ իրր թէ կրակը մեր գործարանից պէտք է պատճառված լինի, նոյն գործակատարների և իւրաքանչիւր մի լսողի և տեսողի ծիծաղն է շարժում:

Մենք մեզ մեղադրված չենք համարում և չենք էլ կարող թույլատրել ուրիշին այդպէս հեշտութեամբ արատաւորել մեր պատիւը: Բայց ով իրան իրաւունք է համարում, թող կամ յայտնի ապացոյցները հաստատի, կամ պարտք համարի ինքեան հրապարակաւ ուրղել իր սխալը, ջնջելով այն արատը, որ անիրաւացի կերպով բարդած է մեզ վրա:

Գ. Տէր-Աւետիսեանց

չարժաւթ, մի յարմար ժամանակ պէտք է, որ դրանք յայտնվեն նրա մէջ: Այժմ ամենայնպէս ժամանակն է: Թուրքները պիտի պատերազմեն թուրքերի հետ, թող հայերն էլ մի կողմից դուրս բարձրացնեն: Եւ հաւատացած եմ, որ ռուսները ամեն կերպով կօչեն մեզ:

Դերունի խաչոն օրդիններ բոլորովին լուռ էին և ոչինչ չէին խօսում: Նրանցից մէկը, որ կոչվում էր Գալօ, որն իր կորպուսների հետ մի շաբաթ առաջ ունեցած խորհրդի մէջ յայտնեց այն միտքը, թէ լաւ է, որ իրանք քայլը Լաւան քուրդ բէկի կնիք լինի, որովհետեւ դրանով կը վայելին իրանց հոգը փեսայի պաշտպանութիւնը, — այդ Գալօն, որ խորին տաճութեամբ լսում էր իր հօր և նրա երիտասարդ հիւրերի խօսքերը, դարձաւ դէպի պ. Գուգուկեանը, ասելով.

— Եթեայդ, քեզանից արեան հոտ է դալիս, մենք ոչ քո չարն ենք ուզում, ոչ քո բարին, էգուց առաստեան չուտ վեր կայ, բանը — մանող հաւաքիր, և հետագիր մեր տնից, թէ չէ, մեր գլխին մի պատուհաւ կը բերես....

Դերունի խաչոն սաստեց օրդուն, որ լռէ, և ինքը գաւառայով պ. Գուգուկեանին, ասաց.

— Գուգու մի նեղացէք իմ որդու խօսքերից, նա չը գիտէ, թէ ինչ է խօսում: Լսեցէք ինձ, ես ոչ կարողացել եմ և ոչ էլ իմանում եմ, թէ ուրիշ երկրներում ուրիշ ազգեր ինչ են չինում: Բայց որպէս երկրաշործ մարդ, ես մի բան գիտեմ. մենք՝ գիւղացիներս մինչև հողը չենք վարում, չենք փափկացնում և չենք պարտաւորում, մեր սերմը չենք ցանում, որովհետեւ գիտենք, որ սերմը չի կանաչի, արմատ չի ձգի, միայն կը ծիլ և ինքն իրան կը չորանայ: Այս բանը Գրիստոս